# Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ

№ 6

(193)

2006թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից




*Նախագիծ*

# ՀԱՅԵԾԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների

Սույն նախագիծը գիտության դերի և նշանակության, Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտում առկա խնդիրների և դրանց առաջնահերթ լուծումների մասին հայեցակարգային դրույթների համակարգ է:

Ժամանակակից աշխարհում հասարակության և տնտեսության զարգացման կարևոր գործոններից է գիտական և գիտատեխնիկական, այդ թվում ինովացիոն գործունեությունը: Գիտությունն է այն կարևորագույն ներուժը, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում լուծել մրցունակ տնտեսության կայացման խնդիրը: Գիտատար արտադրությունն է հանդիսանում տնտեսության փաստացի և արագընթաց զարգացող հատվածը՝ մեծապես ազդելով նրա մյուս ճյուղերի վրա:

Գիտությունն է, որ XXI դարի աշխարհում Հայաստանի Հանրապետության համար կարող է ապահովել արժանի տեղ: Առանց մտավոր ներուժի աճի, որը պայմանավորված է կրթության և գիտության զարգացմամբ, չի հաջողվի լուծել սոցիալ-տնտեսական բարդ խնդիրներ, հասնել քաղաքացիական համաձայնության, կառուցել զարգացած ժողովրդավարական հասարակություն:

Հայաստանի Հանրապետության համար կարևորագույն ռազմավարական խնդիր համարելով գիտության զարգացումը և տեխնոլոգիական առաջընթացը՝ անհրաժեշտ է ապահովել այդ ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացումը: Գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի կազմակերպումը կապահովի Հայաստանի տնտեսության վերընթաց զարգացումը:

### 1. Գիտության ոլորտի ներկա վիճակը

Հայաստանի Հանրապետությունում գիտությունը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակության առաջընթացի կարևորագույն գործոն, մշտապես գտնվել է պետության ուշադրության ներքո: Հանրապետության գիտական ներուժը որոշ հաշվարկներով կազմում է շուրջ 20 հազար մարդ: ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերի և թեմաների իրականացման գործում ներգրավված են շուրջ 7 հազար գիտնականներ և գիտական աշխատողներ: Անկախության տարիներին ապահովվել է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժի պահպանումը, գիտնականների՝ ազատ ստեղծագործելու իրավունքը, ի հայտ են եկել ոչ պետական գիտական կազմակերպություններ և գիտական հիմնադրամներ, ներդրվել է պետական բյուջեից գիտական ծրագրերի և թեմաների մրցութային և ծրագրային ֆինանսավորման համակարգը, ընդլայնվել է գիտական կազմակերպությունների ինքնուրույնությունը, միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը: Ձևավորվել է օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտը: Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները ձևակերպվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 2000 թ. դեկտեմբերին), Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացման հայեցակարգում (ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 2001 թ. ապրիլին):

Սակայն գիտության ոլորտում հիմնարար բա- ➤2

# ՀՀ ԳԱ ակադեմիայի ընդլայնված նիստում ներկայացվեց ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը

ԵՐԵՎԱՆ, 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ընդլայնված նիստում այսօր ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը ներկայացրեց ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագիծը: Ըստ Ս.Սարգսյանի՝ Հայաստանի զարգացման համար Ազգային անվտանգության ռազմավարության մշակումը դարձել է հրամայական պահանջ, իսկ դրա իրականացումը կապահովի պետության կայուն զարգացումն ու անվտանգությունը:

Նա տեղեկացրեց, որ փաստաթուղթն Ազգային ժողովում կքննարկվի նոյեմբերի 27-ին, լրամշակված տարբերակը կներկայացվի ՀՀ նախագահին, ապա՝ կառավարության նիստում կդրվի քննարկման: Հաստատվելուց հետո ռազմավարությունը կլինի պարտադիր պետական բոլոր կառույցների համար: «Պետք է անցնեն ժամանակները, երբ տարբեր պետական պաշտոնյաներ նույն խնդրի վերաբերյալ հայտնում են տարբեր, հաճախ իրարամերժ կարծիքներ»,- նշեց նախարարը: Ըստ նրա՝ ռազմավարությունը չի պատրաստվել որպես օրենքի նախագիծ, քանի որ աշխարհում նման պրակտիկա չկա. փաստաթուղթը քարացած չէ, դա իշխանությունների քաղաքական ծրագիրն է, և ընդդիմությունը, հասարակական կազմակերպությունները «ցանկացած հարցի վերաբերյալ կարող են ունենալ սեփական կարծիք»:

Փաստաթղթի վերաբերյալ մեթոդաբանական բնույթի խորհրդատվություններ են իրականացրել ԱՄՆ-ի, Եվրոպայի եւ Ռուսաստանի Դաշնության մասնագետները, փաստաթուղթն անցել է փորձաքննություն ՌԴ-ում, ԱՄՆ-ում և ՆԱՏՕ-ում: Նախարարի հավաստիացմամբ՝ բոլոր եզրակացությունները հաստատում են, որ ստեղծված նախագիծը մեթոդաբանությամբ և բնույթով համապատասխանում է համանման փաստաթղթերի բոլոր չափանիշներին:

Գիտնականները, ռազմավարության նախագիծը համարելով համակողմանի մշակված փաստաթուղթ, առաջարկեցին սահմանել, թե որ ժամանակաշրջանի համար է այն մշակված, ամրագրել, որ պետությունը պետք է ապահովի հանրապետության սահմաններից դուրս գտնվող քաղաքացիների անվտանգությունը՝ շեշտադրել հայրենդարձության խնդիրը: Գիտնականները կարծիք հայտնեցին, որ փաստաթղթում առավել մեծ ուշադրություն է դարձվել արտաքին քաղաքականությանը, մինչդեռ առավել կարևոր են ներքին խնդիրները: Դիտարկմանն ի պատասխան՝ նախարարը նշեց, որ ազգային անվտանգության հիմնական նպատակը ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովումն է, իսկ ֆիզիկական գոյության առաջին վտանգն արտաքինն է: Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնված է փոխլրացման սկզբունքի վրա, և դիվանագիտության խնդիրն է գտնել և համադրել պետության ու ժողովրդի շահերը, եթե այդ շահերը գտնվում են տարբեր բևեռներում, ապա քաղաքականությունը պետք է լինի բազմաբևեռ: «Փորձ է արվել ունենալ ազգային շահերին համապատասխանող փաստաթուղթ, որով բոլորին հասկանալի է դարձել, որ մենք ոչ ռուսամետ ենք, ոչ ամերիկամետ»,-ասաց նախարարը:

Բանակի խնդիրներին առավել ծավալուն բաժին հատկացնելու գիտնականների առաջարկին ի պատասխան՝ Ս. Սարգսյանը տեղեկացրեց, որ հաջորդ տարի կսկսվի Ռազմական դոկտրինի մշակումը, որն ամբողջությամբ կնվիրվի զինված ուժերի խնդիրներին և կհաստատվի կամ 2007-ի տարեվերջին կամ 2008թ-ին: Ս. Սարգսյանը նշեց, որ փաստաթուղթը չի մշակել Ազգային անվտանգության խորհուրդը, քանի որ կառույցն աշխատակազմ չունի, խորհրդի շատ փաստաթղթեր մշակվում են ՀՀ պաշտպանության նախարարությունում:

Նախարարն առաջարկեց բոլոր առաջարկությունները գրավոր ներկայացնել ՀՀ նախագահի՝ 2005թ-ի դեկտեմբերի 16-ի կարգադրությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը, որը բաղկացած է շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարներից և Աժ պատգամավորներից: Նախատեսվում է փաստաթուղթը հաստատել մինչեւ 2007թ-ի մայիսը:

# ՀԱՅԵԾԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

➢1 րեփոխումների իրականացումն անչափ ծգծգվեց, ինչը հանգեցրել է նրան, որ կուտակվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջնահերթ լուծումներ են պահանջում:

Գիտության ոլորտում միասնական քաղաքականության մշակման և արդյունավետ իրականացման գործում հիմնական խոչընդոտներից են պետական կառավարման միասնական համակարգի բացակայությունը, գիտական կազմակերպությունների գերատեսչական տարանջատվածությունը ակադեմիականի, բուհականի, ծյուղայինի: Չնայած օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի որոշ բարելավմանը և գիտական կազմակերպությունների ընդլայնված ինքնուրույնությանը, գործող վարչական ոչ արդյունավետ սխեմաները ձևավորվում են գերատեսչական շահերի և անձի գործոնի ազդեցությունների տակ:

Արդիական գիտական ենթակառուցվածքների բացակայությունը հանգեցնում է գիտական ներուժի ոչ արդյունավետ օգտագործման:

Մշտական և արդյունավետ գործող գիտական անկախ փորձաքննության բացակայությունը, հաստատված գիտության գերակա ուղղությունների անհարկի բազմաքանակությունը, դրանցում գիտական հետազոտությունների արդյունավետության ցածր մակարդակը չեն նպաստում ոլորտի արդյունավետ կազմակերպմանը: Պետության կողմից գիտությանը կոնկրետ ձևակերպված և հասցեագրված պատվերների բացակայությունը, գիտության ոլորտի առևտրայնացման, գիտական արդյունքի ապրանքայնացման ցածր մակարդակը, ինովացիոն գործունեության համար համապատասխան պայմանների, գիտական արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի դանդաղ ձևավորումը նույնպես խոչընդոտում են ոլորտի զարգացմանը:

Գիտական ներուժի վերարտադրության ուղղությամբ նպատակաուղղված քաղաքականության բացակայությունը հանգեցնում է գիտական կազմակերպություններում և բուհերում գիտական և գիտամանկավարժական կադրերի երիտասարդացման անբավարար մակարդակին: Օրախնդիր է դարձել որակյալ գիտական կադրերի, առաջին հերթին երիտասարդների արտահոսքը գիտության ոլորտից, այդ թվում՝ արտերկիր: Գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ծրագրերի խիստ անբավարար ծավալները և երիտասարդ գիտնականների արտահոսքը վտանգավոր սահմանագծի են մոտեցրել ինչպես գիտական դպրոցների պահպանումն ու զարգացումը, այնպես էլ բուհերում որակյալ գիտամանկավարժական կազմի ապահովման հարցը:

Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը անբավարար է կազմակերպված: Պետական մակարդակով կոնկրետ և հասցեագրված քայլեր չեն կատարվում Հայաստանում առկա և ձևավորվող գիտական հեռանկարային ուղղությունները արտերկրի նմանօրինակ ուղղությունների հետ ինտեգրելու գործում: Հստակ պաշտպանված չէ գիտնականի հեղինակային իրավունքը, և անուշադրության են մատնված գիտական արդյունքի ապրանքայնացման ու արտերկրում դրա իրացման հարցերը:

Բացասական երևույթներից են նաև համապարփակ միասնական գիտական տեղեկատվական համակարգի ոլորտում ժամանակակից գիտատեխնիկական բազայի բացակայությունը, գիտության և կրթության ինտեգրման անբավարար մակարդակը:

Գիտության ոլորտում ստեղծված նմանօրինակ վիճակի հիմնական պատճառներից են պետական բյուջեից ֆինանսավորման չնչին ծավալները (ՀՆԱ-ի մոտավորապես 0,3 տոկոսը) և դրա ցածր արդյունավետությունը: Գիտության ոլորտում ներկայիս կազմակերպական ձևերում առանց այդ էլ խիստ անբավարար ֆինանսական հատկացումները հիմնականում փոշիացվում են, անգամ գիտության ոլորտում ներդրված պետական ֆինանսավորման բազմաձևության (թեմատիկ, բազային, նպատակային-ծրագրային) պարագայում՝ ամբողջովին չծառայելով գիտության զարգացման խնդրին:

Գիտության ոլորտի ներկա վիճակը օրվա հրամայական է դարձրել արդյունավետ գործող, առաջադիմական գիտակրթական համակարգի ձևավորումը Հայաստանում: Գիտության ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը պետական մարմիններից, իշխանության բոլոր օղակներից և հասարակությունից պահանջում է համակարգված կառուցողական գործունեություն: Բարեփոխումների ձախողումը կարող է խաթարել երկրի կայուն զարգացումը:

## 2, Գիտության ոլորտում առկա խնդիրների առաջնահերթ լուծումները

Գիտության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծումը: «Տնտեսական համագործակցության և զարգացման երկրների» կազմակերպությունը «գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը» սահմանում է որպես տնտեսություն, որն ուղղակիորեն հիմնված է գիտելիքների և տեղեկատվության արտադրության, բաշխման և օգտագործման վրա: Պետությունը պետք է վճռորոշ դերակատարություն ունենա «գիտելիքի վրա հիմնված տնտեսության» ստեղծման և զարգացման գործում:

Գիտական ոլորտի բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից՝ գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման և ենթակառուցվածքների արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից՝ ըստ գիտության գերակա ուղղությունների գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպման, գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման, նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

■ ձևավորել գիտության ոլորտի պետական կառավարման միասնական համակարգ, ավելացնել գիտության ֆինանսավորման ծավալները, հստակեցնել ֆինանսավորման ձևերը և մեխանիզմները, բարձրացնել ֆինանսավորման արդյունավետությունը,

■ բարձրացնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը,

■ ապահովել գիտական ներուժի արդյունավետ, նպատակային վերարտադրությունը,

■ արդիականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքները, նյութատեխնիկական բազան,

■ ստեղծել գիտության ոլորտի գիտական անկախ փորձաքննության արդյունավետ համակարգ,

■ հստակեցնել գիտության գերակա ուղղությունները,

■ ապահովել գիտության և կրթության ինտեգրումը,

■ նպաստել գիտական արդյունքի ապրանքայնացմանը և դուրսբերմանը ներքին և արտաքին շուկա:

1. Գիտության ոլորտի պետական կառավարման միասնական համակարգի ձևավորում

Գիտության ոլորտի պետական կառավարման միասնական համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է գիտության ոլորտի կառավարման բոլոր մակարդակներում իրականացնել գործառույթների ճշգրտում ու հստակեցում, այնուհետև այդ գործառույթները վերապահել համապատասխան կառավարման մարմիններին և կազմակերպություններին: Այդ ուղղությամբ առաջնահերթ քայլերից է ՀՀ կառավարությանն առընթեր կամ ՀՀ նախարարության կարգավիճակով պետական կառավարման մարմնի ստեղծումը: Այդ մարմնին վերապահվելու է գիտության ոլորտում պետական քաղաքականության մշակումը, իրականացումն ու վերահսկումը: Այդ մարմնի կազմում պետք է ընդգրկվեն բոլոր գերատեսչությունների համապատասխան, այդ թվում առանձնացված ստորաբաժանումներն իրենց անձնակազմով: ՀՀ վարչապետին կից կազմավորվող գիտության և տեխնոլոգիաների խորհուրդը պետք է քննարկի գիտության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները և իրականացնի պետական քաղաքականության համադրման խնդիրները:

2. Գիտության ֆինանսավորման ծավալների ավելացում, ձևերի հստակեցում, ֆինանսավորման արդյունավետության բարձրացում

Գիտության ֆինանսավորման ծավալների մեծացումը ենթադրում է էապես ավելացնել ՀՀ պետական բյուջեից գիտությանն ուղղված միջոցները: Սույն հայեցակարգից բխող համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում անհրաժեշտ է այն աստիճանաբար ավելացնել՝ հասցնելով 2010 թ. ՀՆԱ-ի 1%-ի չափին, իսկ 2015 թ.՝ ՀՆԱ-ի 2%-ի չափին: Միաժամանակ անհրաժեշտ է գիտական կազմակերպություններն ազատել շահութահարկից այն մասով, որն ուղղվում է գիտական նոր սարքավորումների ձեռքբերմանը, գիտական արդյունքի ներդրմանը: Արտաբյուջետային միջոցները գիտության մեջ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպությունների՝ գիտությանն ուղղված ծախսերը ընդգրկել նրանց ընդհանուր ծախսերի կազմի մեջ: Անհրաժեշտ է նաև օրենսդրորեն ամրագրել և իրականացնել համաֆինանսավորման սկզբունքը, ինչը հնարավորություն կընձեռի արտերկրից և տարբեր միջազգային կազմակերպություններից լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավել գիտության ոլորտ: Դրա համար անհրաժեշտ է մրցութային կարգով հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող գիտական հետազոտությունների ծրագրերի և գիտական թեմաների ֆինանսավորումն իրականացնել պետության կողմից ստեղծված գիտական հիմնադրամի միջոցով: Անհրաժեշտ է մշակել գիտության զարգացման միջազգային, տարածաշրջանային ծրագրեր և ակտիվորեն մասնակցել դրանց իրականացմանը, ապահովել գիտական սփյուռքի հետ սերտ շփումներ, երկարաժամկետ համատեղ ուսումնասիրություններ իրականացնել, կազմակերպել սեմինարներ և ամառային դպրոցներ և այլն: Կարևոր է ինտեգրումը Եվրոպական գիտական տարածք: Ինտեգրման գործառույթների իրականացման համար պետության առջև լուրջ խնդիրներ են առաջանում գիտության կազմակերպման նոր մոդելի, ֆինանսավորման նոր մեխանիզմների, միմյանց կրկնող գիտական հաստատությունների նկատմամբ կազմակերպչական նոր մոտեցումների մշակման և իրականացման տեսակետից:

Անհրաժեշտ է մշակել նաև գիտական ծրագրերի և թեմաների ֆինանսավորման այնպիսի մեխանիզմներ, որով բացառվի պետության կողմից տրվող առանց այն էլ սուղ միջոցների փոշիացումը: Պահպանելով ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես մրցութային կարգով, ծրագրային հիմնավորման սկզբունքով և հասցեագրված: Այդ նպատակով անհրաժեշտ է կատարելագործել պետբյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանն ուղղված ֆինանսավորման ձևերը, հստակեցնել դրանց չափանիշները և մեխանիզմները՝ ապահովելով համապատասխան չափորոշիչներով միջոցների հասցեագրված հատկացումը, պատասխանատվության սահմանումը:

■ Բազային ֆինանսավորումը պետք է իրականացվի գիտակազմակերպչական ու հիմնարար և կարևորագույն կիրառական հետազոտական ծրագրեր իրականացնող գիտական կազմակերպությունների (գիտական ինստիտուտներ, կենտրոններ) և գիտակրթական ենթակառուցվածքների (լաբորատորիաներ, այդ թվում նաև բուհեր) պահպանման նպատակով, ինչպես նաև առանձին եզակի և կոլեկտիվ օգտագործման բնույթ ունեցող սարքավորումների ձեռքբերման համար, մրցութային կարգով՝ ըստ գիտության գերակա ուղղությունների:

■ Պետական նպատակային ծրագրային ֆինանսավորումը պետք է իրականացվի համապետական նշանակության ռազմավարական ծրագրերի շրջանակներում, գիտական և գիտատեխնիկական հիմնավորմամբ հետազոտական ծրագրերի ձևով: Նպատակային ծրագրային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը պետք է առավելապես կիրառական բնույթի լինեն և առաջադրվեն համապատասխան գերատեսչությունների կողմից: Նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգը անհրաժեշտ է լրամշակել և համապատասխանեցնել պետության կողմից առաջադրված խնդիրներին և դրանց լուծմանը:

■ Գիտության գերակա ուղղություններին համապատասխան՝ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը պետք է վերածվի իրական շնորհային համակարգի: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը կոչված է ապահովելու գիտության գերակա ուղղությունների շրջանակներում առանձին արդիական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների լուծումը, որոնք կարող են բերել նոր գիտական հետազոտությունների կամ գիտատեխնիկական մշակումների:

3. Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում

Տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ այժմ գործող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացումը հնարավոր է միայն դրանցից յուրաքանչյուրի աշխատանքը նպատակաուղղելով գիտության վերը նշված հիմնական գործառույթներից որևէ մեկի հասցեագրված կատարմանը: Այդ կազմակերպությունը կգործի և բազային ֆինանսավորում կստանա հասցեագրված ֆունկցիան կատարելու համար:

Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով առաջնահերթ անհրաժեշտ է իրականացնել գիտական կազմակերպությունների գիտական և նյութական գույքագրում: Այնուհետև անհրաժեշտ է իրականացնել համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Անկախ գերատեսչական պատկանելությունից, անհրաժեշտ է միավորել միևնույն գիտական ուղղության պետական գիտական կազմակերպությունները՝ ստեղծելով հիմնադրամի կազմակերպա-իրավական կարգավիճակով գիտական կենտրոններ (գրանցում առանձին ֆինանսատնտեսական և կազմակերպա-իրավական ինքնուրույնություն ունեցող ստորաբաժանումների գործունեության ապահովմամբ, գիտական կենտրոններում ժամանակակից մենեջմենթի արմատավորմամբ):

Գիտական կազմակերպություններում, այդ ➢3

# ՀԱՅԵԾԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

➢3 թվում նորաստեղծ կենտրոններում, անհրաժեշտ է տարանջատել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները, դրանցում մի կողմից արմատավորելով ժամանակակից մենեջմենթը (գործադիր տնօրենի պաշտոնի արժեքավորմամբ, դրանցում առանձին ֆինանսական, տնտեսական և կազմակերպական ինքնուրույնություն ունեցող ստորաբաժանումների գործունեության ապահովմամբ), մյուս կողմից վարչական ազդեցությունից հանելով գիտական քննարկումների ու որոշումների ընդունման գործառույթները՝ գիտական խորհրդի ղեկավարումն իրականացնելով տվյալ ուղղության գիտական ղեկավարի միջոցով:

Անհրաժեշտ է հստակեցնել բուհերում գիտական ստորաբաժանումների կազմակերպա-իրավական և ֆինանսատնտեսական կարգավիճակը՝ ապահովելով ֆինանսատնտեսական գործունեության որոշակի ինքնուրույնություն և որոշ դեպքերում տալով նրանց իրավաբանական անձի կարգավիճակ: Որոշ գիտական կազմակերպությունների հիման վրա կարելի է ստեղծել գիտատեխնոլոգիական և ինովացիոն տիպի կազմակերպություններ (տեխնոպարկեր, բիզնես-ինկուբատորներ, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ և այլն): Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան կարելիության կենտրոն, որը պետք է ապահովի գիտական կազմակերպություններին և առանձին գիտնականներին իրավական օգնության տրամադրումը, աջակցի գիտական արդյունքի արտահանմանը ներքին և արտաքին շուկա և այլն:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան իր կառուցվածքային միավորներով, որպես ամբողջական համակարգ, կիրականացնի գիտական հետազոտության և նորաստեղծության կազմակերպումը, գիտական արդյունքի ստացումը և ներդրումը: Անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ ԳԱԱ-ի կազմակերպա-իրավական կարգավիճակը, ՀՀ ԳԱԱ-ի նախագահության և համակարգի գիտահետազոտական կազմակերպությունների կարգավիճակը և փոխհարաբերությունները: ՀՀ ԳԱԱ-ն պետք է վերակազմակերպվի պետական հիմնադրամի և գործի ՀՀ կառավարության կողմից հաստատված կանոնադրության համապատասխան՝ ՀՀ ԳԱԱ-ին օրենսդրությամբ վերապահված հատուկ կարգավիճակի շրջանակներում: ՀՀ ԳԱԱ-ի օրենսդրորեն ամրագրված գործառույթների իրականացումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է կանոնակարգել նրա՝ որպես կառավարության խորհրդատու մարմնի լիազորությունները: Միաժամանակ ՀՀ ԳԱԱ-ին պետք է վերապահել գիտության զարգացման վերաբերյալ համապարփակ, պարբերական գնահատումների և փորձագիտական որոշ գործառույթների իրականացումը:

4. Գիտական ներուժի վերարտադրության ապահովում

Գիտական ներուժի վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ է կարճ ժամկետում իրականացնել գիտական ներուժի վերլուծություն, գիտական կադրերի պահանջարկի ուսումնասիրում և գնահատում: Գիտական ներուժի հաշվառման և արդյունավետ օգտագործման նպատակով անհրաժեշտ է ստեղծել ազգային բանկ՝ ներառելով դրանում նաև արտերկրում գործող հայ գիտնականների տվյալները: Միաժամանակ անհրաժեշտ է մշակել գիտական ներուժի զարգացման ծրագիր, որն առաջնահերթ պետք է ուղղված լինի գիտական կադրերի երիտասարդացմանը: Միջազգային ճանաչում ունեցող գիտնականների համար անհրաժեշտ է ներդնել հատուկ պայմանագրային համակարգ, որով հնարավորություն կընձեռվի նրանց համար առավել բարձր վարձատրության պայմաններ ապահովել: Երիտասարդ գիտնականների և ասպիրանտների համար անհրաժեշտ է ստեղծել դրամաշնորհների և կրթաթոշակների հատուկ համակարգ, որով կապահովվի գիտական ներուժի երիտասարդացումը և որոշակիորեն կթուլացվի արտահոսքը արտերկիր: Անհրաժեշտ է բարձրացնել գիտական աշխատանքի վարկը, ստեղծել գիտնականների և գիտական աշխատողների կյանքի ու աշխատանքի համար պատշաճ պայմաններ:

Անհրաժեշտ է իրականացնել հետբուհական կրթության բարեփոխումներ, այդ թվում՝ ստեղծել գիտական կադրերի պատրաստմանն ուղղված պետական պատվերի ձևավորման գիտականորեն հիմնավորված համակարգ, վերափոխել ասպիրանտուրայի համակարգը:

Հայաստանի Հանրապետությունում սահմանվելու է գիտական աստիճանաշնորհման երկմակարդակ նոր համակարգ:

Ասպիրանտուրայի հետբուհական գիտակրթական ծրագրում կընդլայնվի կրթական բաղադրիչը, և կավելացվի ուսման տևողությունը՝ այն դարձնելով համադրելի և համընթեռնելի արտերկրում գործող հետբուհական կրթական երրորդ աստիճանի հետ: Այն հաջողությամբ ավարտողներին, ովքեր կպաշտպանեն նաև ավարտական ատենախոսություն, կշնորհվի փիլիսոփայության դոկտորի (PhD) և/կամ դրան հավասարեցված գիտական աստիճան:

Հետդոկտորական շրջանի գիտական ստեղծագործական ծրագիրը և պահանջվող պայմանները կատարելուց, համապատասխան ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ անձին շնորհվելու է գիտական երկրորդ՝ գիտությունների դոկտորի աստիճան:

5. Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտությունը

Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացումը ենթադրում է առկա նյութատեխնիկական բազայի, այդ թվում՝ թանկարժեք և բացառիկ սարքավորումների գույքագրման, գիտական կազմակերպությունների անձնագրավորման, կադրային ներուժի հաշվառման առաջնահերթ իրականացում: Այնուհետև անհրաժեշտ է մշակել և իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման հատուկ նպատակային ծրագիր: Միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել գիտական և գիտատեխնիկական միասնական հիմնարար գրադարանային համակարգ՝ գրադարանների խոշորացմամբ և գրադարանային սպասարկման նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, ստեղծել գիտության և տեխնոլոգիայի ոլորտում գիտավերլուծական, գիտատեղեկատվական և գիտախորհրդատվական համալիր կենտրոն, այդ նպատակով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության «Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն»-ը ենթարկել գիտության ոլորտի պետական կառավարման մարմնին: Անհրաժեշտ է արդյունավետ օգտագործել և զարգացնել միասնական գիտատեղեկատվական ցանցը, ապահովել վերջինիս կապը միջազգային ցանցի հետ, վերափոխել գիտահրատարակչական գործունեությունը՝ միջազգային չափանիշներին գիտական հրատարակությունների համապատասխանության ապահովմամբ, էլեկտրոնային հրատարակությունների իրավական խնդիրների լուծմամբ:

6. Գիտության ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծում

Առաջնահերթ խնդիր է փորձագիտական անկախ և մշտական գործող համակարգի ձևավորումը և արդյունավետ գործունեության ապահովումը: Անհրաժեշտության դեպքում դրանում պետք է ընդգրկվեն նաև օտարերկրյա փորձագետներ: Այդ համակարգի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել, սահմանված կարգով հաստատել ու անվերապահորեն կիրառել գիտական և գիտատեխնիկական գործունեության գնահատման համապատասխան չափանիշներ: Որպես հիմք կարող են ընդունվել միջազգային պրակտիկայում գործող, մեր երկրում միջազգային դրամաշնորհային հիմնադրամների կողմից կիրառվող գիտական փորձաքննության մոդելները: Առաջին շրջանում գիտական փորձաքննության այդպիսի կազմակերպման անհրաժեշտ ֆինանսավորումը կկատարվի միջազգային դրամաշնորհների միջոցներով:

7. Գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունների հստակեցում

Պետական գիտատեխնիկական քաղաքականության առաջնահերթությունների սահմանումը, գիտական ներուժի հնարավորությունների համապատասխան վերլուծությունը հնարավորություն կընձեռեն գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունների հստակեցման համար: Անհրաժեշտ է սահմանված կարգով հաստատված չափանիշների հիման վրա վերասահմանել գիտության և տեխնոլոգիաների գերակայությունները: Այն ենթադրում է առաջին հերթին ներկայումս հաստատված գիտության գերակա ուղղությունների ցանկի փոխարեն գիտականորեն հիմնավորված նոր ցանկի մշակում և վերահաստատում: Գիտական հետազոտությունների գերակայությունները որոշելիս պետք է ելնել.

■ պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ռազմավարական խնդիրներից,

■ աշխարհում հետաքրքրություն ներկայացնող հետազոտական խնդիրներից,

■ տվյալ ուղղությամբ գիտական դպրոցի առկայությունից կամ դրա հիմնադրման հնարավորությունից,

■ ազգային անվտանգությունից բխող խնդիրներից:

Գիտական գերակա ուղղությունների սահմանումը պետք է լինի առավելագույնս կոնկրետ և պետք է համապատասխանի թվարկված չափանիշներից մի քանիսին միաժամանակ կամ գոնե մեկին:

Միաժամանակ անհրաժեշտ է մշակել գիտության և տեխնոլոգիաների գերակայություններին համապատասխան իրականացվող գիտական ծրագրերի և թեմաների, այդ թվում նաև ինովացիոն ծրագրերի առաջնային ֆինանսավորման մեխանիզմներ:

8. Գիտության և կրթության ինտեգրում

Գիտության և կրթության ինտեգրումն անհրաժեշտ է կրթությունը մրցունակ և հրապուրիչ դարձնելու, գիտության վերարտադրությունը և տնտեսության կայուն զարգացումն ապահովելու համար:

Գիտության և կրթության ինտեգրումն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել գիտության և բարձրագույն դպրոցի ինտեգրման ծրագիր: Այդ ծրագրում անհրաժեշտ է նախատեսել համապատասխան գիտական կենտրոններում բուհերի ամբիոններ և ամբիոնների մասնաճյուղերի ստեղծում, պայմանագրային հիմունքներով դրանցում ուսանողների պրակտիկայի կազմակերպում: Միաժամանակ անհրաժեշտ է մշակել և ներդնել հետազոտական համալսարանների չափանիշները, առաջատար բուհերը վերափոխել հետազոտական համալսարանների: Այդ նպատակով անհրաժեշտ է որոշ գիտական կազմակերպություններ միավորել համալսարանների հետ:

9. Գիտական արդյունքի ապրանքայնացում և դուրս բերում ներքին և արտաքին շուկա

Առաջնահերթ խնդիր է գիտական արդյունքի ապրանքայնացումը և ընդհանուր առմամբ ազգային ներդրումային (ինովացիոն) համակարգի ձևավորումն ու արդյունավետ գործունեությունը: Անհրաժեշտ է հասնել նրան, որ գիտական արդյունքները որպես ապրանք դուրս բերվեն ներքին և արտաքին շուկա: Ըստ էության, անհրաժեշտ է գիտության ոլորտի բոլոր մակարդակներում լուծել առևտրայնացման խնդիրը: Նպատակ ունենալով ապահովել գիտական արդյունքի (այդ թվում՝ տեխնոլոգիաների) ապրանքայնացման խնդրի լուծումը, անհրաժեշտ է իրականացնել.

■ գիտական արդյունքների (այդ թվում՝ տեխնոլոգիաների) ապրանքային ձևերի սահմանում՝ դրանց համակարգման համար պատասխանատու պետական կամ պետության մասնակցությամբ կառույցներով՝ ըստ ոլորտների, բնույթի և բնագավառների,

■ մտավոր սեփականության օրենսդրության կատարելագործում միջազգային պահանջներին համապատասխան,

■ ինովացիոն գործունեության համակարգի ձևավորում և գիտական արդյունքների ներդրման արդյունավետ մեխանիզմների ստեղծում,

■ գիտական նորամուծությունների ոլորտում մանր ու միջին ձեռներեցության աջակցության ապահովում, գիտական կազմակերպություններին արտոնյալ վարկեր տրամադրելու համակարգի ստեղծում,

■ տեխնոպարկերի՝ գիտական նորամուծությունների կենտրոնների, ստեղծում, այդ թվում պետական գիտահետազոտական կազմակերպությունների հիմքի վրա,

■ գիտատեխնիկական ոլորտում վենչուրային ներդրումների խրախուսում,

■ նորամուծության ռիսկերի ապահովագրության զարգացում,

■ մտավոր սեփականության ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենքների փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև մտավոր սեփականության արտահանման ոլորտի օրենսդրական կարգավորում,

■ պետության գործունեության ակտիվացում գյուտարարների ստեղծագործական աշխատանքի արդյունքների արտոնագրերի վաճառքի և նրանց գործունեության արդյունքներն արտասահմանում պատենտավորելու հարցերում,

■ գիտահետազոտական ինստիտուտների մի մասի վերակազմավորում ինովացիոն կազմակերպությունների՝ զարգացած մարքեթինգային և կոմերցիոն կառուցվածքներով:

Նշված բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ է օրենսդրական նորմատիվ իրավական դաշտի համապատասխան կարգավորում: Գիտության առաջընթաց զարգացումն ապահովելու նպատակով նշված բարեփոխումներին զուգահեռ անհրաժեշտ է մշակել ՀՀ-ում գիտության զարգացման պետական ռազմավարական ծրագիր:

**Խնդրում ենք Ձեր առաջարկությունները և դիտողությունները ներկայացնել ՀՀ ԿԳ նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ շենք, 6-րդ հարկ, 614 սենյակ):**

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԸ ԿՈԽԿՈՏՎԱԾ Է

**ԳԱԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտը գոյություն ունի 60 տարի: Այսօր մեր թերթի հյուրն է Եվրոպայի գիտությունների ակադեմիայի անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր ՄԲԻ-ի նախկին տնօրենը՝ ԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԸ:**

- Այսօր գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասի համար գիտական մշակումների կոմերցիալացումը մնում է գլխավոր խնդիր: Ինչպե՞ս է ձեզ մոտ լուծվում այդ խնդիրը: Ունե՞ք, արդյոք, մշակումներ, որոնք անցել են կոմերցիլիզացիա և պատրաստ են դուրս գալու շուկա:

**- Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում կան մի քանի ինստիտուտներ (որոնց թվում և մերը), որոնք ի վիճակի են որոշակի արտադրանք հանել շուկա՝ իրացման համար: Նախկինում գիտական հաստատությունները իրավունք չունեին վաճառել իրենց արտադրանքը, սակայն ԳԱԱ նախկին պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանի և նախկին ակադեմիկոս-քարտուղար Էմիլ Գաբրիելյանի ջանքերի շնորհիվ մեզ հաջողվեց այդ իրավունքը ձեռք բերել: Սակայն, դժբախտաբար, պարզվեց, որ շատ ինստիտուտներ ոչինչ չունեն հանելու շուկա: Ինչ-որ մշակում շուկային առաջարկելու համար անհրաժեշտ է ունենալ պատրաստի նյութ, տեխնոլոգիական ռեգլամենտ, բիզնես-ծրագիր, համապատասխան տարածք, մասնագետներ և ուրիշ շատ պարագաներ: Այս ամենը հազվադեպ է համակցված և առկա մեկ գիտական հաստատության շրջանակներում:**

**Եվ, այնուամենայնիվ, նման ինստիտուտներ կան և դրանցից մեկը Միկրոբիոլոգիայի ինստիտուտն է: Մեր ինստիտուտի որոշ հիմնարար մշակումներ անցել են կոմերցիալիզացիա և արդեն ներդրվում են արտադրության մեջ: Օրինակ, ինուլինի հիմքի վրա բաղցրացնողների և շաքարի փոխարինողների ստացման տեխնոլոգիան: Ինուլինը ստացվում է գետնախնձորի պալարներից: Այս եղանակը 2003 թվականին ներդրվեց Մալայզիայի մայրաքաղաքում: Արդեն կառուցված գործարանը գործում է մինչև հիմա՝ մեր ինստիտուտի մասնագետների խորհրդատվական համագործակցությամբ:**

**Իր նշանակալիությամբ երկրորդը հայտնի «Նարինե» կաթնամթերքն է, որը ստացվել է պրոֆեսոր Լ. Երզնկյանի կողմից նոր յուրահատուկ Luctobaciklus acidophilus շտամի հիմքի վրա: Մեր ինստիտուտը այս կաթնամթերքի օրինական և միակ պատենտակիրն է: Արտադրության անցած տարիների ընթացքում այդ մթերքը ստեղծվել է ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Իսրայելում և ուրիշ երկրներում: Դժբախտաբար, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա ինստիտուտը դրանից ոչ մի օգուտ չունի: Վերջին ժամանակներս անազնիվ և խարդախ «ձեռներեցներ» «Նարինե» անվան տակ ժողովրդին վաճառում են գեղեցիկ փաթեթավորած սովորական մածուն:**

**Քիչ չեն դեպքերը, երբ այդ պրոբիոտիկի արտադրությունը կազմակերպվում է բժշկա-կենսաբանական անհրաժեշտ պահանջների անտեսմամբ: Համապատասխան մարմինների հանձնարարությամբ մենք անցկացրինք այսպես կոչված «Նարինե»-ների հետազոտություններ, որոնք վերցված էին վեց կետերից: Այդ նմուշներից ոչ մեկը չէր համապատասխանում այդ կաթնամթերքին ներկայացվող պահանջներին: Ավելին, մի շարք նմուշներում հայտնաբերվել են հիվանդածին միկրոբներ: Համեմատաբար «Նարինե»-ին համապատասխանող մթերք է արտադրում լոկ «Անասնաբուժական ինստիտուտը»: Այս ամենը վկայում է այն մասին, որ այս կաթնամթերքի արտադրության համակարգմամբ պետք է զբաղվի պետությունը: Որպես պետական ձեռնարկություն մեր խնդիրը կայանում է նրանում, որ մշակենք մթերքի ստացումը, անցկացնենք կոմերցիալիզացիա և հանձնենք պետությանը: Մենք տարբեր աստիճանի համապատասխան մարմիններին արել ենք այս առաջարկությունը, սակայն ոչ մեկը չի ուզում սրանով զբաղվել:**

- Իսկ ձեր ինստիտուտը «Նարինե» արտադրո՞ւմ է:

**- Այո, շատ քիչ քանակությամբ, որը մեզանից գնում է ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունը՝ գյուղական բնակավայրերում բաժանելու համար:**

**Զանգվածային արտադրության համար պետք է կառուցել գործարան: Իսկ դրա համար միջոցներ են պետք: Որտեղի՞ց այն վերցնել: Նման հարցերը վերաբերում են ոչ միայն մեզ, այլև այն բոլոր հաստատություններին, որտեղ առկա են լուրջ մշակումներ: Բիոտեխնոլոգիական արտադրությունում ներդրումներ կատարելու հետ կապված շատ հարցեր կախված են օդում:**

- Եվ սա այն պարագայում, երբ բիոտեխնոլոգիաները կարծես թե հանդիսանում են էկոնոմիկայի գիտական գերակա ուղղություններից մեկը:

**- Իսկապես որ՝ կարծես թե: Ասելն ավելի դյուրին է, քան կատարելը: Նայեցեք, թե ինչ է կատարվում Չինաստանում: Նրանք աշխարհով մեկ գնում են պարզունակ տեխնոլոգիաներ, կազմակերպում են արտադրությունը և հարստանում: Շանհայն այսօր վերածվել է ինքնատիպ մի քաղաքի, որը նշանակալի չափով բիոտեխնոլոգիական մշակումների շնորհիվ միլիարդավոր դոլարներ է վաստակում:**

**Մեր ինստիտուտը Դաբաղի ինստիտուտի հետ համատեղ խոզերի դաբաղի դեմ ստեղծել է սկզբունքորեն նոր պրոֆիլակտիկ դեղամիջոց՝ գետապոլը: Այն պաշտպանված է հեղինակային վկայականով, բազմաթիվ փորձարկումներ է անցել ԱՊՀ երկրների տնտեսություններում: Սակայն, չնայած մեր բոլոր ջանքերին, մեզ չհաջողվեց այդ դեղամիջոցով շահագրգռել Հայաստանի գյուղատնտեսության նախարարությանը: Չնայած նրան, որ հակադաբաղային այդ նյութի արտադրությունը (մինչև 0,5 տոննա) կարող էինք կազմակերպել ԳԱԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտում: Էջմիածնի և Նուբարաշենի տնտեսություններում մենք եիշյալ դեղամիջոցը փորձարկեցինք խոշոր եղջերավոր անասունների և թռչունների վրա: Արդյունքը ավելի քան բարձր էր: Եվ, այնուամենայնիվ, մեր դեղամիջոցը պետք չէ, և նախապատվությունը տրվում է շատ ավելի սուղ պատրաստուկներին և վակցինաներին, որ ներմուծվում են դրսից: Ի դեպ, երբ մեր դեղամիջոցի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերեցին արտասահմանցիները, մեզ արգելեցին վաճառել ստացման տեխնոլոգիան: Ասացին՝ մենք կանենք: Արդյունքում՝ և արգելեցին վաճառելը, իրենք էլ՝ ոչինչ չարեցին:**

(Շարունակելի)

*Արտատպված է «Դելովոյ էքսպրես» թերթից*

## Քիմիական պատիժ՝ Մեծ եղեռնը ժխտողներին



1915 թվականին թուրքերի կողմից կազմակերպած հայերի զանգվածային ջարդերը, որի իրողությունը շատ այլ երկրների հետ ընդունել էր Ֆրանսիայի Ազգային ժողովը, և հաստատեց նաև Սենատը, բուռն զայրույթ առաջացրեց Թուրքիայում: Ֆրանսիական դեսպանատունը քարկոծվեց: Եթե 21-րդ դարասկզբին նման վանդալիզմ է թույլ տալիս Թուրքիան աշխարհի մեծ տերություններից մեկի նկատմամբ, պատկերացրեք, թե ի՞նչ է արել նա մեկ դար առաջ՝ անպաշտպան հայ ժողովրդի նկատմամբ: Թուրքիան չի փոխել իր դեմքը, նա ուզում է քաղաքակիրթ երևալ, բայց... չի ստացվում...

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ. 1. Փարիզ. Նոտր-Դամ: 2. Մեծ եղեռնից փրկված հայերը ապաստան են գտել Ֆրանսիայի հարավում, կառուցում են մշակութային տուն, եկեղեցի, մանկատուն...

## Ապրե՞լ, թե՞ ուտել

Այսպիսի հրեշավոր այլընտրանքի առջև կանգնեցրին բժիշկները 42-ամյա ամերիկացի Պատրիկ Դյուքլին, որի մարմնի զանգվածը կշռում էր... 482 կիլոգրամ:

Այս մարդը, որ առանց կողմնակի օգնության անկողնում նույնիսկ շրջվել չէր կարողանում (ուրիշ բաների մասին էլ չխոսենք), ընտրեց... ապրելը: Պատրիկի համար բժիշկները սահմանեցին դաժան դիետա:

Առաջին մի քանի շաբաթվա ընթացքում Պատրիկի քաշը նվազեց 145 կիլոգրամով: Առաջիկա երկու տարիների ընթացքում Պատրիկին վիճակված է ևս 200 կիլոգրամով նվազեցնել իր քաշը: Միայն այդ պարագայում են բժիշկները երաշխավորում նրա կյանքի անվտանգությունը:

## Էլեկտրաթերապիա՝ Հին Հռոմում

Ինչպես պնդում են պատմաբանները, Հռոմի կայսր, տխրահռչակ Ներոնը հատուկ լոգանքներ է ընդունել բուժական նպատակներով: Ասում են, որ նա ամեն օր պառկել է ջրով լցված տաշտի մեջ, որում լողացել են էլեկտրական լիցքեր արձակող ձկներ: Այդ կերպ նա բուժել է իրեն տանջող հոդացավերը:

## Հիվանդությունը մեզ ազդանշաններ է հղում քնած ժամանակ

**Հոգեբանները հաստատում են, որ մեր օրգանիզմը մոտալուտ հիվանդության մասին մեզ ազդանշաններ է հղում հենց քնած ժամանակ: Սովորաբար դա նշան է, որ հիվանդությունը մեր մեջ արդեն կա, բայց դեռևս չենք զգում և տեսնում դրա ախտանշանները: Ցանկացած երազահանում գրված է՝ հում միսը հիվանդության նշան է: Կան նաև ուրիշ նշաններ, որոնք տարբեր երազահաններում յուրովի են մեկնաբանվում:**

### Եթե երազում ձեզ խեղդում են՝ սփոփեցեք ձեր սիրտը

Շատ հաճախ սրտի նոպայի նախօրյակին մարդիկ հաճախ են երազում տեսնում, որ իրենց խեղդում են, խփում են իրենց կրծքին, նեղ, կուրծքը սեղմող հագուստ են հագվել, կայծակը խփում է կրծքին և այլն:

### Հիվանդ են լարդը կամ ենթաստամոքսային գեղձը

Սա երազներում ծնում է պատկերներ, երբ մարդը տեսնում կամ ուտում է փչացած, հին մթերքներ՝ ձուկ, միս, հոտած բանջարեղեն կամ միրգ:

### Ստամոքսային հիվանդություններ

Սրան նախորդում են երազներ, երբ մարդը վիրավորվում է փորից, ստամոքսը վիրահատում են կամ երկունքի ցավեր է քաշում:

### Եթե շնչառական օրգաններն են հիվանդանում

Երազում դուք կարող եք տեսնել, որ ձեզ կենդանի-կենդանի թաղում են, ջրի տակից չեք կարողանում դուրս գալ, կամ ինչ-որ մեկը նստել է ձեր կրծքին և չի իջնում:

### Եթե հիվանդ են հոդերը և ողնաշարը

Այս դեպքում երազները ազդանշանում են հետևյալ կերպ. ոտքերին կաղապարներ են հագցրած, ձեզ մահակով գանահարում են, դուք հագել եք շատ նեղ կոշիկներ, անասելի ծանր բեռ եք շալակել, ինչ-որ մեկի առջև երկար նստած եք ծնկաչոք:

### Մի՞շտ են արդյոք վտանգավոր սարսափազդու երազները

Պարտադիր չէ: Բժիշկ-հոգեբան, պրոֆեսոր Միխայիլ Վինոգրադովը գտնում է, որ երազները բազմապիսի նշանակություն ունեն. նրանք ոչ միայն կարող են ապագան նախանշել, այլև լույս աշխարհ հանել վաղուց ապրած-գնացած ցավ կամ եղելություն:

Օրինակ, մի քանի տարի առաջ մարդը ավտովթարի է ենթարկվել: Եվ ահա նա գնում է փողոցով ու տեսնում ճիշտ նույնպիսի մեքենա, որն իրեն վրաերթի է ենթարկել: Նրա ենթագիտակցության մեջ նորից վերածնվում են այն սարսափն ու ցավը, որը նա ապրել է: Եվ ահա գիշերը երազում նա իրեն տեսնում է վիրակապերով փաթաթված, անշարժ պառկած մահճակալին: Սակայն նրան աղետ, վտանգ չի սպառնում: Փորձանքը նա վաղուց ապրել է: Ահա ինչու երազները մեկնաբանելիս պետք է անչափ ուշադիր լինել: Ապագայի մասին կռահումներ անելուց և վախենալուց առաջ հիշեցեք ձեր անցյալը:

### Էլ ի՞նչ երազներ է մարդը տեսնում, որոնք հիվանդության ազդանշաններ են

Պրոֆեսոր Միխայիլ Վինոգրադովը գտնում է, որ երազահաններին կարելի է հավատալ, սակայն անպայման ընտրովի: Կան երազահաններ, որոնք կազմված են երկարատև և բարեխիղճ դիտարկումների արդյունքում: Դրանցից է «Միլլերի երազների» բառարանը, որը հավաքվել է 100 տարի առաջ: Միացյալ Նահանգների շատ հոգեբաններ և հոգեբույժներ, մեկնելով իրենց հիվանդների երազները, հաճախ են օգտվում այդ «բառարանից»: Սակայն, ինչպես ասում են, երազը մնում է երազ, և Աստված գիտե, թե ինչեր ձեզ այցի կգան քնի ժամանակ:

*Ռուսական մամուլից*

Գիտություն

Գլխավոր խմբագիր Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,

հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 21.11.2006թ.

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА